սահմաններից և բերելով Արշակաւան քաղաքի աւերակները, Հարամլու ձորումը միանում է Սարիդայիրի հետ: Նյորդը բղխում է Սանատրուկ և Սաւեար լեռներից, անցնում է Թադէոս առաքելոյ վանքի տակից: Այս երեք ճիւղերը Ասպարածին վանքի աւերակների մօտ խառնվում են իրար և կազմում են Զենգիւմեր գետը, որ Ակի ժայռոտ և դժուարակոխ ձորից անցնելով հարաւից դէպի հիւսիս Օղակ գիւղի մօտ խառնվում է վերոյիշեալ ճիւղերի հետ և շրջելով ընթացքը դէպի արեւելք, մտնում է Մագուայ ձորը:

Ամենից հետաքրքրական երկու Մասիսների մէջ եղած հարաւային սարոտներն են, ուր ամեն քայլափոխում ճանապարհորդը պատահում է հնութիւնների. մի տեղ երեւում են քանդուած եկեղեցւոյ պատերը, միւս տեղ պարիսպների հիմունք, բնակարանների հետքեր և այլն: Այդ դեռ անծանօթ վայրերի վերայ մի գաղափար ունենալու համար, ես մի քուրդ առաջնորդ գտայ, որ ծանօթ էր նոցա դժնդակ շաւիղներին: Հակառակ առաջնորդիս նախազգուշութիւններին ճանապարհի վտանգների և անտանելի դժուարութեանց մասին, կէս գիշերին մենք ուշ ճանապարհ ընկանք, որովհետև ձիով շարժուիլը անկարելի էր: Ինձ շատ հետաքրքրական էր տեսնել մի բնակված քարայր: Վեց ժամ երկու Մասիսների միջի ուղղութեան վերայ մագլցելից զկնի, լուսաբացին մենք հա-